«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 62-3/03

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 02.03.2021թ. ժամը 16:00

Համաձայն ՀՀ Արդարադատության նախարարությունից վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝02.10.2020թ. ստացված «Հայէկոնոմբանկ» ՓԲ ընկերության 27.07.2020թ-ի թիվ Մ/33497-2020 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ «Ուստր Մամիկոն» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչներ՝ Հովհաննես Եղյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Մարտի 02-ին,ժամը 16-00-ին՝ք.Երևան,Արշակունյաց 5 հասցեում, հրավիրված «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի Դեկտեմբերի 11-ին չկայացած նիստին.

**ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝**
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմեն Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Դիմումատու՝ «Հայէկոնոմբանկ» ՓԲ ընկերությունը
«Ուստր Մամիկոն»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչներ՝
Հովհաննես Եղյանը

**ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝**
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմեն Ադամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյան
«Ուստր Մամիկոն»ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչներ՝
Հովհաննես Եղյանը :

Դիմումատու՝«Հայէկոնոմբանկ» ՓԲ ընկերությունը պատշաճ ծանուցված էր,բայց անհայտ պատճառով իր ներկայացուցչի ներկայությունը չէր ապահովվել:

**ՕՐԱԿԱՐԳՈՒՄ**
1. ՀՀ Արդարադատության նախարարությունից վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝02.10.2020թ. ստացված «Հայէկոնոմբանկ» ՓԲ ընկերության 27.07.2020թ-ի թիվ Մ/33497-2020 դիմումի հետագա ընթացքը ապահովելու նպատակով ՝ «Ուստր Մամիկոն» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչներ՝ Հովհաննես Եղյանի գործողությունների /անգործության/ փաստերի նկատմամբ, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման, բողոքում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

**ԼՍԵՑԻՆ**-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը բացեց նիստը և տեղեկացրեց նիստի մասնակիցների վերաբերյալ առ այն,որ նիստին չի ներկայացել դիմումատու՝«Հայէկոնոմբանկ» ՓԲ ընկերությունը և նրա ներկայացուցիչը,իսկ սնանկության գործով կառավարիչը ներկայանալով հանձնաժողովին իր ներկայացրած բացատրություն-առարկություններից բացի լրացուցիչ այլ փաստաթղթերի ներկայացման համար հայտնեց իր պատրաստակամությունը:

Հանձնաժողովի նախագահն խնդրեց հանձնաժողովի ներկա անդամներից հայտնել կարծիքներ առանց դիմումատուի նիստը շարունակելու վերաբերյալ, հայտնելով այն կարծիքը որ դիմումատուի ներկայացուցիչը տեղեկացված է ժողովի տեղի և վայրի մասին և չներկայանալը կարող է նշանակել այլ նյութեր կամ փաստեր չունենալու կամ չներկայացնելու հանգամանքի ապացույց և իր կարծիքով կառավարչի կողմից ներկայացված բացատրություն-առարկությունը և համապատասխան փաստաթղթերը հնարավորություն կտան ձևավորելու կարծիք եզրակացության գալու համար:

Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը հայտնեց այն կարծիքը,որ հաշվի առնելով որ այս դիմումով եզրակացության գալու համար արդեն չորրորդ նիստն է որ հրավիրվում է և նախորդ նիստերում լսվել է սնանկության գործով կառավարչի կարծիքը և դիմումատուն հնարավորություն ուներ ներկայացնելու և ավելացնելու իր դիմումում նշված փաստական հանգամանքները և նախորդ նիստում եզրակացություն չի կազմվել միայն հանձնաժողովի քվորում չլինելու պատճառով,որը ներկայումս առկա է,ուստի ինքը առաջարկում է սկսել նիստը առանց դիմումատուի և մեկ անգամ ևս ուսումնասիրել ներկայացված նյութերը և գալ եզրակացության:

Հանձնաժողովի մնացած անդամները համաձայնեցին այդ կարծիքի հետ:

«ՍԳԿԿ» ԻԿԿ կարգապահական հանձնաժողովի ներկա անդամները քննարկեցին և որոշեցին, որ սկսել նիստը առանց դիմումատուի,ուսումնասիրելով կառավարչի և դիմումատուի ներկայացրած փաստական հանգամանքները և համպատասխան փաստաթղթերը:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝**

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը հանձնաժողովի անդամներին ներկայացրեց ստացված գործի նյութերը,հակիրճ ներկայացնելով բողոքը մասնավորապես նշեց,որ բողոքում նշված փաստերով բողոքաբերը փորձել է ապացուցել,որ կառավարչը ՀՀ «Սնանկության մասին» օրենքի 39.2 հոդվածի հիմքով դատարանի որոշում կայացնելու,այսինքն գույքն ապահովված պարտատիրոջը արտադատարանական իրացման,հնարավորություն տալու, դատական պրոցիդուրայի ընթացքում,հնարավորություն ունենալով ներկայացնել իր առարկությունները,չի ներկայացրել ոչ մի առարկություն,բայց հետագայում հայցադիմում է ներկայացրել դատարան և բեղոքարկել է իր սեփականատեր դառնալու պռոցիդուրան,որը նրա կարծիքով իր շահերի ոտնահարում է և կառավարչի կողմից կողմնակալ գործողություններ են:

Նախագահն ներկայացրեց նաև ՀՀ Արդարադատության Նախարարության Վերահսկողական ծառայության պետի 02.10.2020թ-ի գրությունը,որով ծառայությունը ԻԿԿ-ին է վերահասցեյագրում դիմում-բողոքը և ներկայացնում է նաև բողոքին կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրություններից պարզված իր վերլուծությունները:Մասնավորապես.

***-Կառավարիչը,պարտապանի անունից ՀՀ Վարչական դատարան հայցադիմումներ ներկայացնելով այն գույքերի վերաբերյալ,որոնք ՀՀ Սնանկության դատարանի համապատասխան որոշմամբ թույլատրվել է իրացնել արտադատարանական կարկով և հետևաբար դուրս է եկել պարտապանի գույքի կազմից հնարավոր է որ կառվարիչը խախտել է «Սնանկության մասին»ՀՀ օրենքի 23.1 հոդվածի 1-ին մասով սահմանված կառավարչի վարքագծի կանոնները կամ կանոնը:***

Հանձնաժողովի նախագահն ներկայացրեց նաև կառավարչի ներկայացրած բացատրությունները և փաստաթղթերը և խնդրեց անդամներին կարծիքներ հայտնել:

Հանձնաժողովի անդամ Ա.Ադամյանը հայտնեց այն կարծիքը ,որ ուսումնասիրելով առկա փաստական հանգամանքները,ներկայացրած բացատրությունները և փաստաթղթերը պարզ է դառնում,որ կառավարչի գործողությունները իրավաչափ են,որի ապացույց է հանդիսանում ՀՀ Վարչական դատարանի կողմից ներկայացված հայցադիմումների վարույթ ընդունելը, այսինքն կառավարիչը իրավասու էր այդ գործողությունների կատարմանը,բացի դրանից նույն

«Սնանկության մասին»ՀՀ օրենքն է կանոնակարգում դեպքեր այդպիսի որոշումներից հետո տալով կառավարչին իրավունքներ,իսկ պարտատիրոջը պարտականություններ,այսինք նմանօրինակ որոշումների կայացումից հետո այնպես չէ որ արտադատարանական կարգով իրացման տրված գույքերը դուրս են գալիս սնանկության վարույթից և պարտատերը այդ գույքերի հետ կարող է վարվել այնպես ինչպես ինքը կգտնի հարմար և կառավարիչը չունի այդ գործողությունները բողոքարկելու կամ այդ գործողությունների իրավաչափության վերաբերյալ հայցադիմումներ ներկայացնել դատարան,քանի որ շատ հնարավոր է որ իրացման գործընթացները բախվեն այլ պարտատերեի և պարտապանի օրինական շահերի հետ,որոնց պաշտպանությունը նույնպես պետք է իրականացնի կառավարիչը:

Հանձնաժողովի անդամ Ռ.Խալաթյանը համաձայնելով ներկայացրած կարծիքի հետ ավելացրեց,որ տվյալ պարագայում կառավարի ներկայացրած հայցադիմումները վերբերվում են,ոչ թե գույքերի արտադատարանական իրացման տալու նպատակահարմարությանը,այլ այդ իրացման եղանակի և կարգի իր կարծիքով օրենքի խախտումով կատարելուն:Այսինքն կառավարիչը չի ունեցել առարկություններ գույքերը դատարանի կողմից ապահովված պահանջատիրոջը արտադատարանական կարգով իրացման հանձնելու վերաբերյալ,բայց իրացման ընթացքում ի հայտ եկած փաստերի հիմքով ունեցել է առարկություններ գույքը բանկի սեփականություն վերցնելու պռոցիդուրային,որը ի դեպ կարգավորվել է օրենքի փոփոխություններով,որը և ի պաշտպանություն պարտապանի և մնացած պարտատերերի, իրականացրել է:

Կարգապահական Հանձնաժողովի նախագահ Տիգրան Հարությունյանը հայտնեց այն կարծիքը,որ ըստ էության ստացվել է,որ ապահովված պահանջատերը դիմել է դատարանին ստանալու համար գրավի առԱՀՏԱՆերը արտադատարանական կարգով իրացնելու համար և ստացել է այն,բայց իրականում կատարել է գույքը իր անվամբ գրանցելու գործընթաց,որը կարող էր իրականացնել «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդված 9-րդ մասի կարգով,բայց միտարբերությամբ պետք է վճարեր կառավարչի վարձատրությունը և գույքի պահպանման և փոխանցման կառավարչի կատարած ծախսերը:Այսինքն ապահովված պարտատերը ինքն է շրջանցել կառավարչի,պարտապանի և մնացած պարտատերերի, օրինական շահերը և ավելին բողոքում է իր կրած հնարավոր վնասներից:Ինչ վերաբերվում է կառավարչի գործողություններից նրանք չեն հակասում «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 23.1-րդ հոդված և ոչ մի կետին ավելին տվյալ գործով ցուցադրվել է **անկողմնակալ վերաբերմուն** վարույթի մասնակիցների նկատմամբ,որը հնարավորություն է ընձեռնել պարտապանին,գույքի սեփականատերերի/գրավատուների/ և մնացած պարտատերեի համար ,որպես հայցվորի կողմում հանդես եկող,երրորդ անձինք,դատարանում պաշտպանել իրենց օրինական շահերը,իսկ հակառակ դեպքում կողմերը կարող էին արդեն բողոքել կառավարչի կողմնակալ բանկի օգտին,անգործությունիցն,նա նշեց նաև որ իր կարծիքով նման գործողությունները նպաստում են կառավարիչների նկատմանբ վստահության ամրապնդմանը:Հանձնաժողովի նախագահն առաջարկեց ընդունել կառավարչի բերած օբեկտիվ պատճառաբանությունները և կարգապահական վարույթը կարճել կառավարչի մեղքի բացակայության պատճառաբանությամբ:

Հանձնաժողովի անդամները նույնպես հայտնեցին,որ իրենց կարծիքով նույնպես կառավարչի գործողությունները բխել են օրենքից և իրենց մեջ կարգապահական խախտումներ չեն պարունակում:

Հանձնաժողովի անդամները քննարկեցին դիմումում նշված հանգամանքները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը և բացատրությունները և արդյունքում քվերկեցին:

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝**

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1.ՀՀ Արդարադատության նախարարությունից վերահասցեագրված և «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում՝ 02.10.2020թ. ստացված «Հայէկոնոմբանկ» ՓԲ ընկերության 27.07.2020թ-ի թիվ Մ/33497-2020 դիմումի հետագա ընթացքը ապահովելու՝ «Ուստր Մամիկոն» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչներ՝ Հովհաննես Եղյանի գործողությունների /անգործության/ օրենքին և կանոնակարգերին համապատասխանության վերաբերյալ հարուցված վարույթի արդյունքներով՝ սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ հարուցված կարգապահական վարույթը «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 5 հոդվածի 5.1 կետի 1-ին ենթակետի հիմքով՝ կարող է կարճվել «Սնանկության գործով կառավարիչների մասնագիտական վարքագծի էթիկայի» կանոնների խախտման դեպքի /մեղքի/ բացակայության պատճառաբանությամբ:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան